մըշակելով ամբոխը աշխատում է առաջանալ դէպի երգեցիկ խումբը, տղաները կանչելու համար:

Դժուա՛ր գործ: Է՛դքան էլ մարդ: Մինչեւ որ հասնում է խմբին՝ բաւականի ժամանակ է անցնում: Ցոգնած՝ կանգ է առնում, չունչ առնում ու ձեռքը կրծքին սեղմած ցուցամատը շարժում է վեր վար, ծռում, բաց անում,— ոչ ոք չի նայում: Կամաց կանչում է՝ չեն նայում եւ կարծես դեռ աւելի ոգեւորուած են երգում: Տաւարիշէ Առաքելը որոշում է մի քիչ սպասել, մանաւանդ որ յետ գնալը այնքան էլ հեշտ չէ: Ձեռքերը ծալում է կրծքի վրայ. «Սպասենք, ե՝րբ պիտի վերջանայ» եւ գլուխը ջղայնացած տրորում:

Եկեղեցին ամբողջովին լոյս է, ոսկի եւ երգ: Վերջի տարիներին նա վարժուել էր եկեղեցին երեւակայել մեծ, քարէ գերեզմանի նման մի բան՝ սառը, խոնաւ, տխուր մի տուն: Իսկ ե՛կ տես որ...

Ամենից աւելի նրան տպաւորում էր երգը: Բոլորն էլ գիտէ: Շարականները արիւնի մէջն են: Քանի՛, քանի անգամ ինքն էլ շապիկ է հագել, սպասաւորել, երգել... Հին յուշերը տրորում են սիրտը: Ծանօթ մեղեդիները, քարի տակ թաքնուած աղբիւրի նման, կոկորդը քերում են:

— Ադա, դէ, երգում էք, լա՛ւ երգեցէք էլի... Անպիտանները սխալ են անում,— քթի տակ սկսում է զգուշօրէն մրմռալ:

Զգուշօրէն՝ չլինի թէ լսեն: Բայց ինչպէս գետը կամաց կամաց իր հոսանքին է յանձնում ափը ընկած առարկան, այդպէս էլ Առաքելի ձայնը, իրեն համար աննշմարելի կերպով, միանում է խմբերգումին: Երախաների բիւրեղեայ եւ սուր ձայների հետ նրա հաստ ու բամբ երգը հնչում է հեռաւոր որոտի նման, եկեղեցու լոյսերը շարժում, լայն խողոցների մէջ մելամաղձօրէն կլկլում ու խոր շնչառումի կատարին աղմկօրէն պայթում:

Մարդիկ բարձրանում են վեր, նայում, զարմանում: «Գործկոմի Առաքելը եկեղեցում երգում ա»... Պատարագիչ քահանան, որ նկատել է նրան, երկու մատով օրհնելու տեղ, իր բոլոր հինգ մատերն էլ շարժում է գլուխների վրայ: Սարկաւագի ձեռքին բուրվառը հանգիստ չունի: Տղաները պոռում են:

Ցանկարծ, երկարաձիգ մի «ամէն»ի ժամանակ, Առաքելի հաստ ձայնը Ա–ի որոտից յետոյ Մ–ն ներս է կլլում եւ չպայթած ռումբի նման վայր ընկնում: Տաւարիշէը նայում է չորս կողմ, հառկանում, աչքերը հիւանդ կովի նման չռում, կարմրում եւ ամբողջ ուժով ժողովուրդը հրմշակելով եկեղեցուց դուրս նետւում:

Ա՛յ քեզ բան...

* * *

Դուրսը ձիւնի վրայ զանգակի ձայները թառում են կապոյտ թռչունների պէս:

Արեւը մայր է մտել:

Զարմանալի է, ցուրտ էլ չէ:

* * *

Ցիսուս ծնուել է գիւղում:

Կովի եւ էշի մօտ եւ ոչ հեռու աղաւնուց, որ նստած է տանիքի վրայ:

Բարձր ձիւն է եկել: Գիւղը կորել է գետնի տակ: Եկեղեցու տանիքը ծակ է՝ ջուր է կաթում եւ ցուրտը, ճերմակ մտրակը ձեռքին, ներս է մտել:

Ցիսուսի վրայ ձիւն է թափւում, պատարագը խօսում է ցրտի հետ կապտած շրթերով, եւ Աստուածամօր աչքերը թաց են ուրախութիւնից:

Սեղանի վարը, մի քանի երախաներ, կլորիկ, կարմրաթուշ, զարմացած աչքերով, անհանգիստ շարժւում են եւ յանկարծ մէկը միւսի ետեւից, գլուխը վեր բռնած պոռում են: Կարծես բարձր ծառի վրայ թառած մի թռչուն են կանչում: Քահանան անորոշ պատասխաններ է տալիս, իսկ երախաները իրենց սառած մատերը բերանն են դնում ու շնչով տաքացնում:

Մոմերի դողդղացող բոցերը ծերերի աչքերի մէջ մանն են դալիս եւ Աւետարանի խօսքերից, ճրագի պէս, Ցիսուսը ծնւում է:

Ցուրտը, խունկը, Ցիսուսը:

Եկեղեցու դրան դիմաց ախոռ է: Երդիքից չոգի է դուրս գալիս: Խունկի հոտը խառնւում է թրիքի հոտին: Մոգերի ճռռացող սայլը մօտենում է: Ծեր բիձաները աղմկով հագում են, հարսները խաչ են անում, իսկ քահանան իր մօրուքի հետ խորհրդաւոր խօսում է:

Ալէլուիա, ալէլուիա...

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան